

**Հաստատված է**  
**Քաղաքացիական իրավունքի**  
**քաղաքացիական դատավարության**  
**ամբիոնի՝ 31.08.2020թ. նիստում**  
**արձանագրություն № 1**  
**Ամբիոնի պետ, ի.գ.թ., դոցենտ,**  
**ոստիկանության փոխգնդապետ**  
**Գ. Իսրայելյան**

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՄԱԼԻՐ**  
**ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ**

ԱՌԱՐԿԱՅԻԱՆՎԱՆՈՒՄ	ՀՀ քաղաքացիական դատավարության իրավունքի
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ	
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Իրավագիտություն /հեռակա/
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ մասնաշենք/սենյակ հեռախոս Էլ.հասցե Web կայքի հասցե	Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոն
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ	Գ.Վարդանյան
ՈՒՄ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ	4-րդ կուրս, 2-րդ կիսամյակ

ԿՐԵԴԻՏՆԵՐ	
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ	«ՀՀ քաղաքացիական դատավարության իրավունքի» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 10 ժամ, որից 6 դասախոսություն, 2 սեմինար, 2 գործնական, ինքնուրույն աշխատանք:  Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը մեկ անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում եզրափակիչ գնահատմամբ՝ քննությամբ:
ՆԱԽԱԴՊԱՅՄԱՆ	Դասընթացը կառուցվում է «ՀՀ սահմանադրական իրավունք»





	<ol style="list-style-type: none"> <li>5. Завриев С. С. Пересмотр по вновь открывшимся обстоятельствам решений, определений, постановлений президиума суда надзорной инстанции, вступивших в законную силу, в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук. М., 2008</li> <li>6. Осокина Г. Л. Курс гражданского судопроизводства России. Общая часть. Учебное пособие. Томск, 2002,</li> <li>7. Решетникова И. В. Доказывание в гражданском процессе. М., 2010</li> <li>8. Коршунов Н. М., Мареев Ю. Л. Гражданский процесс. Учебник для вузов. М., 2004</li> <li>9. Жилин Г. А. Апелляция и кассация в гражданском прцессе// "Современная доктрина гражданского, арбитражного процесса". Материалы международной конференции. Краснодар, 2004</li> <li>10. Жуйков В. М. Судебная защита прав граждан и юридических лиц. М., 1997</li> <li>11. Кейлин А. Д. Судоустройство и гражданский процесс капиталистических государств. Ч. 2. М., 1958</li> <li>12. Борисова А. Е. Апелляция в гражданском (арбитражном) процессе (изд. второе, исправленное и дополненное). М., 2000</li> <li>13. Коршунов Н. М., Мареев Ю. Л. Гражданский процесс. Учебник для вузов. М., 2004</li> <li>14. Мельников А. А. и др. Курс советского гражданского процессуального права. М., 1981</li> <li>15. Васьяковский Е. В. Курс гражданского процесса. Субъекты и объекты процесса, процессуальные отношения и действия. Т. 1, М., 1913</li> </ol>
--	---

<b>ԳՆԱՅԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ</b>	
<b>ԳՆԱՅԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ</b>	Քննություն /քննված չքննված/
<b>ԳՆԱՅԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐ</b>	Ուսանողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% առաջադիմություն:
<b>ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	
<b>Ներկայություն</b>	<p>Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:</p> <p>Ուսանողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Ուսանողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:</p>

<p>Գրավոր աշխատանքների ներկայացվող պահանջներ</p>	<p>Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվել: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:</p>
<p>Ինքնուրույն և գործնական աշխատանքներ</p>	<p>Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում:</p> <p>Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:</p>

**ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՂՈՒՄ**

<p align="center"><b>ԹԵՄԱ 4</b> <b>Վարույթն առաջին ատյանի դատարանում</b> <b>(2 ժամ դասախոսություն)</b></p>	
<p align="center"><b>Թեմայի հարցեր</b></p>	<p align="center"><b>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</b></p>
<ol style="list-style-type: none"> <li>1. Հայց հարուցելու կարգը և այն չպահպանելու հետևանքները:</li> <li>2. Հայցադիմումը: Հայցադիմումի թերությունները վերացնելը:</li> <li>3. Հայցադիմումի ընդունումը կամ դրա ընդունումը մերժելը:</li> <li>4. Զաղաքացիական գործ հարուցելու իրավական հետևանքները:</li> </ol>	<p>Հարցեր 1-4-անցկացվում է դասախոսություն: Ուսանողին տրվում է համապատասխան նյութը:</p> <p>Հարցեր 1-4-անցկացվում է սեմինար պարապմունք քննարկման ձևով: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, թեստային առաջադրանքները, հետադարձ կապի միջոցով նյութի ընկալման աստիճանը, տրվում են ստուգիչ և ամփոփիչ հարցեր:</p>

<p align="center"><b>ԹԵՄԱ 5</b> <b>Հատուկ հայցային և հատուկ վարույթները քաղաքացիական դատավարությունում</b> <b>(2 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)</b></p>	
<p align="center"><b>Թեմայի հարցերը</b></p>	<p align="center"><b>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</b></p>
<ol style="list-style-type: none"> <li>1. Հատուկ հայցային գործերի իրավական բնութագիրը և այդ գործերի տեսակները:</li> <li>2. Հատուկ վարույթի հասկացությունը:</li> </ol>	<p>Հարցեր 1-13 – անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով</p>

<ol style="list-style-type: none"> <li>3. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատումը:</li> <li>4. Շարժական գույքը տիրազուրկ ճանաչելու և դրա նկատմամբ դիմողի սեփականության իրավունքը ճանաչելը:</li> <li>5. Անչափահասին լրիվ գործունակ ճանաչելը /Եմանսիպացիա/:</li> <li>6. Քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելու կամ քաղաքացու գործունակության սահմանափակումները վերացնելու վերաբերյալ գործերը:</li> <li>7. Քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելը կամ քաղաքացուն մահացած հայտարարելը</li> <li>8. Երեխայի որդեգրելը:</li> <li>9. Անձին հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարակամ հոսպիտալացնելը:</li> <li>10. Քաղաքացուն բժշկական հարկադիր հետազոտության և բուժման ենթարկելը</li> <li>11. Ըստ ներկայացնողի և օրդերային կորցրած արժեթղթերով հավաստված իրավունքները վերականգնելը:</li> <li>12. Հարկադիր կատարողի դիմումով կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի վճռի վերանայման վարույթ:</li> <li>13. Արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը հաստատելը:</li> </ol>	<p>խնդրահարույց հարցերի վրա, ներկայացվում է սխեմատիկ պատկերներ:</p>
--	---

<b>Թեմա 6</b> <b>Վարույթը վերաքննիչ դատարանում:</b> <b>Վարույթը վճռաբեկ դատարանում:</b> <b>(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)</b>	
<b>Թեմայի հարցեր</b>	<b>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</b>
<ol style="list-style-type: none"> <li>1. Վերաքննության վարույթի հասկացությունը, սկզբունքները և տեսակները:</li> <li>2. Վերաքննիչ բողոքարկման իրավունքը և դրա իրականացման կարգը:</li> <li>3. Գործի քննությունը վերաքննիչ դատարանում:</li> <li>4. Վերաքննիչ դատարանի որոշումը, դրա օրինական ուժը:</li> <li>5. Վճռաբեկ վարույթի հասկացությունը:</li> <li>6. Վճռաբեկ վարույթի հարուցումը և գործերի քննության դատավարական կարգը:</li> <li>7. Վճռաբեկ դատարանի լիազորությունները և դատական ակտերը վճռաբեկության կարգով բեկանելու հիմքերը:</li> </ol>	<p>Հարցեր 1-7 – կարդացվում է դասախոսություն, ներկայացվում է սխեմատիկ պատկեր:</p>

## Հարցաշար

**ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի հեռակա ուսուցման 4-րդ կուրսում դասավանդվող ՀՀ քաղաքացիական դատավարություն առարկայի ստուգարքի**

1. ՀՀ քաղաքացիական դատավարության իրավունքի հասկացությունը, առարկան և մեթոդը:
2. ՀՀ քաղաքացիական դատավարության իրավունքի համակարգը:
3. ՀՀ քաղաքացիական դատավարության իրավունքի կապն իրավունքի այլ ճյուղերի հետ:
4. ՀՀ քաղաքացիական դատավարության իրավունքի աղբյուրները:
5. Քաղաքացիական դատավարության նորմերի գործողությունը ժամանակի ընթացքում, տարածության վրա և ըստ անձանց շրջանակի:
6. Քաղաքացիների և կազմակերպությունների սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ձևերը:
7. Քաղաքացիական դատավարության հասկացությունը, հատկանիշները և խնդիրները:
8. Քաղաքացիական դատավարության (վարույթի) տեսակները:
9. Քաղաքացիական դատավարության փուլերը
10. Քաղաքացիական դատավարության իրավունքի սկզբունքների հասկացությունը, նշանակությունը և կազմը:
11. Կազմակերպական-գործառույթային (դատարանակազմական) սկզբունքներ: Գործառույթային (դատավարական) սկզբունքներ:
12. Կողմերի հասկացությունը:
13. Դատավարական իրավունակություն և դատավարական գործունակություն:
14. Կողմերի դատավարական իրավունքներն ու պարտականությունները:
15. Դատակցություն: Ոչ պատշաճ կողմի փոխարինումը:
16. Դատավարական իրավահաջորդություն:
17. Երրորդ անձանց հասկացությունը և տեսակները:
18. Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ:
19. Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ:
20. Դատական ներկայացուցչության հասկացությունը և տեսակները:
21. Դատավարական ժամկետների հասկացությունը և տեսակները:
22. Դատավարական ժամկետները հաշվելը, կասեցնելը, վերականգնելը և երկարաձգելը:
23. Դատական ծախսերի հասկացությունը և տեսակները:
24. Պետական տուրք:
25. Գործի քննության հետ կապված ծախսեր:
26. Դատական ապացույցների հասկացությունը:
27. Ապացույցների դասակարգումը:
28. Ապացուցելուց ազատելու հիմքերը: Դատարանի կողմից հանրահայտ ճանաչված փաստեր: Անվիճելի փաստեր:
29. Ապացուցելու և ապացույցներ ներկայացնելու պարտականությունը:
30. Ապացույցների վերաբերելիությունը և ապացուցման միջոցների թույլատրելիությունը:
31. Ապացույցների հետազոտումը և գնահատումը:
32. Վկաների ցուցմունքներ:
33. Գրավոր ապացույցներ:
34. Իրեղեն ապացույցներ:
35. Փորձագետի եզրակացություն:
36. Ապացույցների ապահովումը:
37. Դատական հանձնարարություններ:
38. Հայց հարուցելու կարգը և այն չպահպանելու հետևանքները:
39. Հայցադիմումը: Հայցադիմումի թերությունները վերացնելը:
40. Հայցադիմումի ընդունումը կամ դրա ընդունումը մերժելը:
41. Հատուկ հայցային գործերի իրավական բնութագիրը և այդ գործերի տեսակները:
42. Ընտանեկան գործերը:
43. Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված կամ Հայաստանի Հանրապետությունում ապօրինի պահվող երեխայի վերադարձի վերաբերյալ գործերը:
44. Առանձին աշխատանքային վեճերով գործերը:
45. Կորպորատիվ վեճերով գործերը:
46. Խմբային հայցի հիման վրա քննվող գործերը:
47. Պաշտպանական որոշման վերաբերյալ գործերը

48. Հատուկ վարույթի հասկացությունը:
49. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման գործերի վարույթ:
50. Շարժական գույքը տիրագուրկ ճանաչելու և դրա նկատմամբ դիմողի սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ գործերը:
51. Անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու (Էմանսիպացիա) գործերը:
52. Քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելու կամ քաղաքացու գործունակության սահմանափակումները վերացնելու վերաբերյալ գործերը:
53. Քաղաքացուն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու գործերը:
54. Երեխայի որդեգրման վերաբերյալ գործերը:
55. Անձին հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարակամ հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ գործերը:
56. Քաղաքացուն բժշկական հարկադիր հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու վերաբերյալ գործեր:
57. Ըստ ներկայացնողի և օրդերային կորցրած արժեթղթերով հավաստված իրավունքները վերականգնելու վերաբերյալ գործերը:
58. Հարկադիր կատարողի դիմումով կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի վճռի վերանայման վերաբերյալ գործերը:
59. Արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը հաստատելը:
60. Վերաքննիչ վարույթի հասկացությունը, սկզբունքները և տեսակները:
61. Վերաքննիչ բողոքարկման իրավունքը և դրա իրականացման կարգը:
62. Գործի քննությունը վերաքննիչ դատարանում:
63. Վերաքննիչ դատարանի որոշումը դրա օրինական ուժը:
64. Վճռաբեկ վարույթի հասկացությունը:
65. Վճռաբեկ վարույթի հարուցումը և գործերի քննության դատավարական կարգը:
66. Վճռաբեկ դատարանի լիազորությունները և դատական ակտերը վճռաբեկության կարգով բեկանելու հիմքերը:

Կազմեց՝ Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնում համատեղության կարգով դասավանդող դասախոս

Գ. Վարդանյանը